ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵ
ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ

0010, ք.Երևան, Հանրապետության հրապարակ, Կառավարական տուն 3
www.minurban.am, E-mail: info@minurban.am

16.06.2023թ N 02/16.4/7594-2023

<<ԴԷԿՍ>> սահմանափակ պատասխանատվությամբ
ընկերության տնօրեն
տիկին Նելլի ԾԱՏՈՒՐՅԱՆԻՆ
էլ.փոստի հասցե՝ deksllc@mail.ru

ԾԱՆՈՒՑՈՒՄ
Պայմանագիրը միակողմանի (ամբողջությամբ) լուծելու մասին

Հարգելի տիկին Ծատուրյան

ՀՀ քաղաքաշինության կոմիտեի (այսուհետ՝ Պատվիրատու) և <<ԴԷԿՍ>> սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության (այսուհետ՝ Ընկերություն) միջև 2022 թվականի ապրիլի 22-ին կնքվել է ՀՀ Արագածոտնի մարզի Աշտարակի բժշկական կենտրոնի վերակառուցման աշխատանքների ձեռքբերման ՀՀՔԿ-ԲՄԱՇՁԲ-21/13 գնման պայմանագիրը (այսուհետ՝ Պայմանագիր):

ՀՀ կառավարության 2022 թվականի դեկտեմբերի 29-ի N 2111-Ն որոշմամբ նախատեսվել են ֆինանսական միջոցներ, որի համաձայն 2023 թվականի փետրվարի 20-ին Ընկերությանը ծանուցվել է Պայմանագրում փոփոխություն կատարելու մասին N 2 համաձայնագրի նախագիծը՝ ներկայացման վերջնաժամկետ սահմանելով 2023 թվականի մարտի 14-ը ներառյալ (15 աշխատանքային օր): Ընկերության կողմից Պայմանագրի 8.13 կետով սահմանված ժամկետում չեն ներկայացվել համաձայնագրի հաստատված (ստորագրված, կնքված) օրինակը, պայմանագրի և որակավորման ապահովումների բանկային երաշխիքները, ինչպես նաև միակողմանի հաստատված հայտարարության՝ տուժանքի կամ կանխիկ փողի ձևով պայմանագրի և որակավորման ապահովումները:

ՀՀ կառավարության 2023 թվականի մայիսի 18-ի N 764-Ն որոշմամբ սահմանվել են համաձայնագրի ծանուցման և ներկայացման նոր ժամկետներ: 2023 թվականի մայիսի 23-ին Ընկերությունը ևս մեկ անգամ ծանուցվել է Պայմանագրում փոփոխություն կատարելու մասին N 2 համաձայնագրի նախագիծը՝ ներկայացման վերջնաժամկետ սահմանելով 2023 թվականի հունիսի 13-ը ներառյալ (15 աշխատանքային օր): Ընկերության կողմից սահմանված ժամկետում չեն ներկայացվել համաձայնագրի հաստատված (ստորագրված, կնքված) օրինակը, պայմանագրի և որակավորման ապահովումների բանկային երաշխիքները, միակողմանի հաստատված

հայտարարության՝ տուժանքի կամ կանխիկ փողի ձևով պայմանագրի և որակավորման ապահովումները:

Պատվիրատուն Ընկերության հետ կնքված Պայմանագիրը 2023 թվականի հունիսի 16-ից միակողմանիորեն լուծում է՝ հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2023 թվականի մայիսի 18-ի N 764-Ն որոշման 2-րդ կետի, ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված <<Գնումների գործընթացի կազմակերպման>> կարգի (այսուհետ՝ Կարգ) 33-րդ կետի 12-րդ ենթակետի և Պայմանագրի 8.13 կետի պահանջները:

Համաձայն Կարգի 33-րդ կետի 17-րդ ենթակետի Պայմանագիրը միակողմանի լուծելու մասին ծանուցումը 2023 թվականի հունիսի 16-ին կտեղադրվի www.procurement.am հասցեով գործող տեղեկագրում:

Ընկերության կողմից, որպես պայմանագրային պարտավորությունների պատշաճ կատարման ապահովում ներկայացված պայմանագրի ապահովման բանկային երաշխիքը, ինչպես նաև որակավորման և պայմանագրի ապահովումների միակողմանի հաստատված տուժանքի մասին համաձայնագրերը՝ կից վճարման պահանջագրերի հետ միասին սահմանված կարգով կներկայացվեն Ընկերությանը սպասարկող բանկ՝ ՀՀ ֆինանսների նախարարության կենտրոնական գանձապետարանում Պատվիրատուի հաշվեհամարներին գումարները փոխանցելու նպատակով՝ համաձայն ներքոնշյալ աղյուսակի.

| Պայմանագրի ապահովում | | | | Որակավորման ապահովում | |
|---|---|---|---|---|---|
| Երաշխիքի գումար /ՀՀ դրամ/ | Տուժանքի գումար /ՀՀ դրամ/ | Երաշխիքի հաշվեհամար | Տուժանքի հաշվեհամար | Տուժանքի գումար /ՀՀ դրամ/ | Տուժանքի հաշվեհամար |
| 6 000 000 | 119 000 000 | 900008000664 | 900005000758 | 357 000 000 | 900008000664 |

Հարգանքով՝

Recoverable Signature

X

ԱՐԱՄ ՄԿՐՏՉՅԱՆ
ԿՈՄԻՏԵԻ ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ
Signed by: MKRTCHIAN ARAM 2707650080

ՀՀ ՔԿ ֆինանսատնտեսագիտական և հաշվապահական
հաշվառման վարչության պետ Հասմիկ Բաղինյան, Հեռ: 011621822
Կատարող՝ գնումների կազմակերպման
բաժնի պետ՝ Արայիկ Մնացականյան, Հեռ: 011621722